

ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԿՆՈՐ ՕՐԻՆ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Բագ-ի ԳԱՀԻՐԻ

Direction du journal NOR-OR Caire

Ձեռագիրներն եւ չեն դարձուիր, ԱՐՏՈՒՍՏԵՐ Ի. ՄԻՒՆԻԵ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶ Գ Ա Յ Ի Ն, Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն ԿՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԶՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՆ ՇԱՐԱԹ ՕՐԵՐՐ

ԲԱԺԱՆ ԱՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Table with subscription rates: ԿՅԻՊՏՈՍ ԳՐԵՆՈՂ ԳՐԱԿԻՆ 50, ԳՐԱԿԻՆ 30, ԵՐԵՎԱՆ 60, ԳՐԱԿԻՆ 35, ԱՐՏՈՒՍՏԵՐ ԶԱՐԲ ՏԱՐԵԿԱՆ 30, ԳՐԱԿԻՆ 18, ԳՐԱԿԻՆ 10, ԱՐՏՈՒՍՏԵՐ ԵՆ ԳՈՂՏԻՍ ԶԱՐԲ ՏԱՐԵԿԱՆ 7, ԳՐԱԿԻՆ 4, ԲԱԺԱՆ ԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԹՎԱՐԱՍԱՐԻ ՇԱԽՔԸ ԹԵՐԻՖՆ ԳՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՎՈՅ Է

ԶՈՐԵՔՇՈՒԹԻ ՓԵՏՐՎԱՐ 28/13 ՄԱՐՏ 1901

ՔԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՁ

Ա. ՏԱՐԻ ԹԻ 73

ԶՂԱՅԻՆ ԿԻՆԸ

Յայտնի ճշմարտութիւնն ձեռքէ գեղեցիկութեան զլիսաւոր պայմանը առողջութիւնն է, և թէ կին մը որ գիտէ կնոջական վայելույժ հրապարակ, պարտաւոր է ճշմարտութիւնը իր առողջութեան, գեղեցիկ կին մը նկատուելու գրեթէ բոլոր իրաւունքները ունի, կարծեմ արամաբանական է որ կնոջ մը գեղեցիկութիւնը ինամելու ու պահպանելու միջոցները ցոյց տալէ առաջ, խօսիմք կնոջ առողջութիւնը քաջաբայով բոլոր պատճառներու կարեւորագոյնին, ջղայնութեան վրայ, որ կանանց աշխատանքն մէջ շատ մը զոհեր ունի:

Յարմարութի adaptation սկզբունքին համեմատ, որ այսօր թէ բնական և թէ մասնաւորապէս գիտութիւններու մէջ մեծ յեղաշրջում յատուկ բերած է ճարտիւնի վարդապետութեան հրատարակուելէն ի վեր, գիտնէր թէ կնոջանի էակի փոփոխութիւնն ու բարոյականը միջավայրին, կլիմային, սրտանոցներու տեսակին ու ապրելու եղանակին հետ համեմատաբար կը փոփոխուին: Գիտուած է թէ յարմարութի այս օրէնքը հիւանդութիւններու համար ալ գոյութիւն ունի:

Մարդկութիւնը իր «ես»ին գիտակցութիւնը ունենալէն ի վեր, ստիպուած է կեանքի յարափոխութիւնը մանկերուն տակ ապրելու ու այդ փոփոխականութիւնը իր մէջը յատուկ բերած է հոգեկան այն տեսակ կերպարանափոխութիւններ որոնց վրայ խօսիլը մեր նիւթէն զուրկ է, բայց ինչ որ մեզի համար կարեւոր է, սա անսխալ իրողութիւնն է թէ, մարդկութիւնը տառապեցնող հիւանդութիւններն ալ այդ օրէնքին համաձայն նոր երեւոյթներու տակ է որ կը սկսին մեզ ներկայանալ:

Նախապատմական պայմաններու տակ ապրող մարդկութիւնը, կեանքի տարբեր գործունէութեամբ մը ու տարբեր պահանջներով ենթակայ էր նաև առողջապահական բոլորովին տարբեր վիճակի մը, պէտք է խոստովանել թէ քաղաքակրթութիւնը իր շատ մը տեսակութիւններուն հետ, ունեցած է նաև բնականաբար, բազմա-

մաշխատ կեանքի մը ախտաբանական հետեւանքներն ալ, ինչ որ ամբողջ մարդկութեան համար ճշմարտութիւնն է, ճշմարտութիւն պէտք է ըլլայ նաև մարդկութեան կէսին, կանանց համար ալ:

Այսպէս նախապատմական կինը, կեանքի պայքարը մեզու համար միայն իր մկաններու ոյժին պէտք ունի, իր կեանքը մկաններու կեանք մըն էր. իսկ քաղաքակրթութեամբ պայմաններու մէջ կինը թէ իր ապրելու եղանակով և թէ իր գործունէութեամբ բոլորովին տարբեր էակ մը դարձած է:

Ջղայնութիւնը շեշտուած գործունէութիւնը քաղաքակրթական պայմաններու արդիւնքն է. Այսպէս, մեր դարը, մանաւանդ գործազրկ կինը, մարմնացումը ջիղերու, սասցած է ջիղերու այն հիւանդագին ձգտումը, զոր հարկու չէր կրնար ունենալ նախապատմական կինը իր միայն մեկ կաններու կեանքին գործունէութեամբ մէջ: Ներկայ քաղաքակրթութիւնը իր անհուն բարեփոխումն հետ մէկտեղ, կեանքի ու ընկերական ծանր պայմաններու ենթակրկիտ կինը, երեւան հանած է ջղայն կնոջ նշանաւոր սիւզարը:

Ջղայն գրութեան այս խանգարումները որոնք hysterie neurasthenie nervosismel արիշտանուններով ուսումնասիրուած են գիտնականներու կողմէն, անհատական տանջանք մը ու ընտանեկան տագնապ մը ըլլալէ զատ, ընկերական պատուհաս մը ըլլալու կ'ապառնան այսօր:

Կ'արժէ որ ջղայն կինը հոգեկան տարօրինակ երեւոյթներուն մէջ փորձենք հասկնալ, յետագար մը չէ այն, թէ և իր գործերը փոխանակ հասուն խորհրդածութիւններու վայրկեան կան գրգռմանց ու սպաւորութիւններու արդիւնքն են:

Ջղայն տագնապներու ենթակայ կին մը զազափոխի մը վրայ որոճալ չգիտեր, իրեն համար միշտ նոր բան մը պէտք է երեւակայութիւնը վառ պահելու համար, ապա թէ ոչ խորին թախծութեան մէջ կ'իյնայ, ձանձրոյթը իր մեծագոյն թշնամին է. ծայրայեղօրէն ունայնամիտ է. չկրնար լուրջ ընկերութեանց և ուսումնա-

սիրութեանց մէջ գտնել իր փառքն ու սրտի գոհացումը: Մանրամասնութեանց մէջ իր փառքը կը փնտռէ, և իր մատին պղտի compliment մը կատարելագոյն կը գոհացնէ զինքը: Գրամագոյն է. բայց ոչ անոր համար որ տոտվ իր ընտանիքին ներկայ ու սպաւոր բարօրութիւնը կ'ուզէ սպաւորած ըլլալ և կ'ամ իր նմաններուն օրինակ, այլ որովհետեւ զիտէ թէ իր անայնութիւնը գոհացնելու ատենէն գորաւոր միջոցն է դրամը, զոր շայտընէ՛ կը վառնէ՛ քմահաճոյքներէ դրողութեամբ: Գաղտնաբան ըլլալ իրեն համար տանջանք մընէ. իր գաղտնիքը ամենաւն կը հարգուի, կ'ուզէ այնպիսի մէկը որ հարկ տեսած է, կը սիրէ ուրիշներ որոնք զինքը կը շողբարթեն:

Միշտ ուրիշներով կ'զբօղի, անոնց կատարածները խառն քննադատելով, թէ և մի և նոյն զորքը պիտի գովաբանէր, եթէ նախապէս իրեն հարցուցած ըլլար: Ինչպէս հարցէն բարի ու չար սիրտ մը ունի միանգամայն: Եթէ իր լաւ արամադրութեամբ պատահի, գիւցազնական անձնագոհողութիւններ ու բարեփոխ ընկեր կարող է: Անտանելի ըլլալու չափ հարբա է անոնց հանդէպ որոնցմէ որ և է անկարողութիւն մը չունի, իսկ զրուելի կերպով կ'ստորանայ շահ անկարող անձներուն բով:

Չենք ուզեր երկարել ջղայն կնոջ հոգեբանութեան այս վերլուծումը, և կը բաւականանանք անոր բնատրոյթեան շահեկան բանիմը կէտերը միայն շեշտելով: Բնատրոյթիւն մը, որ ինչպէս կը շտեմտուի, հակասութիւններով լեցուն է: Ընկերայնութեան կը ձգեմ այս տեսակ հասակական արամադրութիւններով կնոջ մը ընտանեկան վիճակը երեւակայել:

Մեր ընտանիքներու մէջ ալ արդէն այս կիները բաւական մեծակալ թիւ մը կը ներկայացնեն, և ընտանեկան յարկին տակ գտնուած իրենց մերձաւորները յաճախ չեն հասկնար թէ իրենց կինը, կամ մայրը և կամ քոյրը, որ տարօրինակ պահանջներ և քմահաճոյքներ ունի միշտ, հիւանդ մըն է, և անոր բնատրոյթեան վերաբրելով այս ամենը միշտ կը յան-

դիմանն ալ զինքը, առանց պիտանալու թէ հիւանդ մը պատասխանատու չէ իր ըրածներուն: Ուրիշներու կողմանէ եղած յանդիմանական խօսքերը սակայն պէտք է զիտուել թէ աւելի կը վնասեն ջիղերով հիւանդ կնոջ առողջութեանը, ու նոյն յագման ու զրգոման հակընդդէմ և զօրաւոր մակնթացութեանց միջոցին, հիւանդին տեսքով ու զօրագոյ մարմինն է որ միշտ կը ստուծէ և մասնատարաբէս ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆՆԵՆ, որ սրբօրով պարկի մը պէս ամենէն առաջ խոյս կուտայ իրմէ:

Ջղայն կինը իր անհոգիատ և միշտ փոխուող յուզումներուն առեւ, զէմքի ներհակ արտայայտութիւններ ունի. իր վայրկեան մը առաջ սպեւորուած գիմազիները գաժան ու չար հոգիի մը կերպարանքը կ'աւանդեն, և կամ նախանձի խայտոյց ցոլբերով կ'սկսին փայլել աչքերը: Ջղայն կինը մեծ զօրագոյ մըն է: Իր անկումներուն մէջ՝ ջիղերու բուռն պրկումներ կը վերականգնեն զինքը նոր և աւելի խոր անկումներու մէջ թաւալելու համար, ու ներքին այս միշտ տանջող գաղտնիները շուտով կ'աւրին կ'արշաղին մարմնոյն զլիսաւոր ու կենսական գործարանները, մասնատարաբէս ստամբան ու սիրտը, որոնք ալ չեն զիտանար իրենց կրած շարժարաններուն ու տեղի կուտան:

Ջղայն կինը այն ատեն, ժամանակէն առաջ ծերացած, իր հոգին իսկ այրած, ու քամուած կեանքի գեղուն հիւթէն, 45-50 տարեկան հասակին մէջ կը մարի, կը հանդարտի:

Այդ տարիքին մէջ ուր կինը փորձառութեամբ հասունցած, պէտք էր որ սկսեր վայելել իր շինած համբաւին պտուղը ու ի տես իր զարգացած գաւակներուն հրճուեր: Ջղայն կինը ընդհակառակը կեանքէն յափրացած է և որ և է բան հաճաք չի պատճառեր իրեն: Նոյն իսկ իր գաւակները յաճախ ձանձրոյթ մը կը գտնան իրեն համար:

Պէտք է զիտուել թէ կինը ի բնէ ջղայն կը ծնի, իր կազմուածքը բնախօսական այնպիսի տարբերութիւններ ունի այս մարդուն կազմութեանէն որ երկուքին, մի և նոյն առողջապահիկ կանոնները սահմանել անկարե-

լի է: Կնոջ առողջարանութիւնը այս տեսակետով բոլորովին զատ գլուխ մը կը կազմէ իրեն յատուկ կանոններով: Կանացի սոյն բնածին ջղա- յին վիճակը որ յատկանշական է և որ մանուսանդ իզական առաւելութիւններէն մէկը կը կազմէ. կարեւոր է որ այդ սահմանէն անդին չանցնի, այսինքն իր ջիղերուն նուրբ գագայնութիւնները հիանդազին զբոսումներու չիփխտին:

Ուրեմն անհրաժեշտ է որ շատ կանուխէն հոգ տարուի աղջկան ֆիզիքական ինչպէս նաև բարոյական գաստրարականութեանը: Շատ 'մը աղջիկներ' որոնք ծնած ժամանակին, բնական ու սխալաճ չափովը ստացած են իրենց ծնողքէն ջղային նիւթը, յետոյ յոռի գաստրարականութեան մը հետևանքով կատարելապէս ջղային կիներ դարձած են, որով ջղայնութիւնը միշտ պէտք չէ ժառանգականութեան վերադրել:

Ջղային կնոջ գորութիւնը ժամանակակից կարեւոր հարց մըն է, ոչ թէ միայն առողջարաններուն այլ և մանկավարժներուն ու ընկերարաններուն համար և որ սերտ կերպով կապուած է ցեղի մը ճակատագրին հետ:

ՏՕՔԹՈՐ ԴԱԻԹԵԱՆ

ՆԱԳԼԻԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԵՆ

Ջարմանակ է. Կիները շատ աւելի աղէկ գիտեն այն քաները... զորս երբէք չեն սորված:

Կիներու անհաւատարմութեամ խնդիրներու մէջ, զիտուած է որ Օ/Ո/ն 50 կիները յամծաւոր են, Օ/Ո 35 սիրականները և ամուսինները 15... առ ճարիւր:

Տեսակ մը անհրամբ կան որ շատ անգամ բարձրացումը մը պատճառ կըլլան:

Երբ աղջիկ մը գոլիւր համար աստ պարկեզ է ու կ'սկսի, կրթութիւնը զատ ըլլալ թէ զանցիտութիւնը քովէն իսկ չէ անցած:

Չոր լեզու կիմ մը կըսէր անցեալ օր — Տիկին Ք... Լրկանը տուած ընծաները կընդունելի հասկի մէ, իսկ սիրականութիւն... համուի մէ:

- Մարկոս աղամ կը ճանչնաս:
— Շատ մտէն:
— Ինչպէս մարդ է:
— Մարդիկուն ամենէն պատուարմ է... զորով: Քաշուելէն ի վեր:

Յ. Ա.

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԵՆ

ՆԱՄԱԿԵՐ ԱՌ ԹՕՄՄԻ

Լոնտոն 1 Մարտ

Ապահովապէս տղիդ արհեստ մըն է հրապարակադիր ըլլալը. ձեզի անանկ պատու, անանկ պախարակելի բաներ ընել կուտայ որոնց հանդէպ ձեր խիղ-

ճը ճիշ մը չարձակեր և ձեր ճակատը ամենէն թեթեւ կարմրութեամբ անգամ չի գունաւորուեր:

Անցեալ իրիկուն՝ Տուրիչէն Լոնտոն գացող կառախումբին մէկ վազակնին մէջ, երբ անուշ անուշ քնանալու վրայ էի, կամացուկ մը աչքիս զարկաւ նամակներու ծրար մը որ հեծելազօրի մը զբոսանէն սահելով գնաց ինկու նստարանին տակ:

Իբրև պատուաւոր մարդ առաջին մտածումս եղաւ

— Պարոն, բաւ այդ գինւորականին, կարծեմ, բան մը կորսնցուցիք:

Բայց իբրև լրագրող՝ երկրորդ խորհրդածութիւնս եղաւ

— Կարելի է մըմտալ— այդ նամակներուն մէջ հետաքրքրական բաներ մը գտնուին:

Պատուաւոր մարդը տեղի տուաւ լրագրողին, հետևաբար ձան ձուն չի հանցել և զուլիս անդին դարձնելով սպասեցի որ հեծելազօրս կայարանը հաննելուս վար իջնայ: Իջնալուն պէս նամակները ժողվեցի և առանց խղճի խայթի, առանց ախշալու բա կայ կարգալ և այս օր ահա՛ կարտատպում զանոնք:

Այդ ծրարը կը պարունակէր հինգ նամակներ որոնց ամեն մէկին երկայնութիւնը երկուքէն մինչև ութ էջ կը գրուէր և որոնց գրութիւնը՝ ամենահեղ անուշալութենէ մը մինչև ամենէն յուսահատ կատարութիւն մը կարտայայտէին. ամենքն ալ սակայն, Մերի ստորագրուած էին անխտիր:

Առաջին առաջին նամակը որ բայց կանանց թղթի վրայ գրուած էր:

8 փետրուար 1901

Մերի Պարոն ձեզ:

Ձեր փափաքները ինձի համար մէյմէկ հրամաններ են: Վէլիկիթընի գորանոցը շատ հեռու կը գտնուէր Բեմպորթէ, ուստի կըսէր թէ չպիտի կրնայ շաքթու մէջ գալ զիս տեսնել: Շատ աղէկ, ես ձեր մտքը պիտի գամ: Եոյն իսկ երկի, սիրուհոյս իմաց տալի. ախ, պարոն, շատ պատի խընդայիք եթէ անոր գորանոցը տեսնել կարելի ըլլար ձեզի:

— Ինչո՞ւ համար տեղի փոխել կուզես կոր, Մերի. հարցոց ինձի:

— Որովհետև, պատասխանեցի, սիրականս կը փախեմ կոր. իմ նոր սիրահարս Լոնտոնի հարաւային—Արեմտեան կողմը կը բռնահի, հետևաբար այլևս չեմ կրնար հիստիսային—Արեմտեան կողմը մնալ:

— Բայց հոգ չէ, Մերի, կը խոստանամ թող տալ քեզի ամեն կիրակի իրեն երթալ և ամեն հինգշաբթի զինքը հոս ընդունիլ:

— Ատիկայ բաւական չէ, ըսի իրեն, ես պէտք ունիմ զինքը տեսնել ամեն բառասունը ութը ժամը անգամսը:

Ասոր վրայ բան մը չի կրցաւ պատասխանել և անմիջապէս փութաց Մօրնիկի — Բայրի մէջ ծանուցում մը գնել և զբել Միս Հընդիկ(*) թէ վայելչազգէմ սպասուհի մը փնտնելու վրայ և որուն կարածն սիրական մը ընդունիլ շարաքը երկու հեղ:

Հիմայ, Պարոն ձեզ, Վէլիկիթընի գորանոցին մտտերը տեղ մը փնտնելու վրայ

(*) Լոնտոնի քաղաքացիական քաղաք, Լոնտոնի մէջ ամենէն շատ զբաղուած անձնաւորութիւնը Միս Հընդիկ է որ ծանուցող տեղաւորելու յատուկ գրասենեակ մը ունի:

եմ, կարծեմ թէ Պէլիքալիան՝ ձեր թաղին ամենէն չիբ փուլցն է:

Ձեզ անտես ամեն օր, ինչ որ արախութիւն, ինձի անանկ կուգայ որ կեանքս ձեզ անասած օրէս կսկսի, թրամվէլի մը վերնայարկին վրայ զիրար ճանչցանք, կը յիշես, որ ինչ ներքեցիք փրձած կոճակներդ կարելի մազերդ փոխելիք օձել և խաղալ ձեռքի բարակ գաւազանիդ հետ:

Կը տեսնէք, Պարոն ձեզ, բա իս, քովմիները (անգլիական զինուոր) մարտց գեղեցկագոյններն են, բայց հեծելազօրքերը՝ գեղեցկագոյնները քովմիներն:

Խանդակաթօրն ձերդ

Մերի:

Երկրորդ նամակը վարագոյն թղթի վրայ գրուած էր: Առաջին երեսին վերի ձախ անկիւնը, նկարուած էր պզտիկ սիրոյ աստուած մը որ, իր անմեղութիւնովը հագուած, անառակօրէն կը ցատկարէր շափրակաթերթի մը վրայ:

16 փետրուար

Իմ սիրելի ձեզ:

Ինչ որ ձեր Մերի կը ինչպէք շատ արարացի կը գտնեմ: Ինչ կըսէք թէ Գէթի՝ ձեր նախկին սիրուհին, ամեն անգամ կիրակի օրերը երկու ժամ պարտել երթալ նույ՛ն ձեզի երկու շիջու կատայ եղբք, այսինքն ժամը շիջու մը: Կը յաւելուք թէ ասիկայ կանոն մըն է և թէ ձեր ընկերները ասիկէ պակաս չեն պարտիր: Կը հաւանիմ, ես ալ այդ երկու շիջուները պիտի տամ հոգեհատար ձեզին: Միայն աս կայ որ որովհետև ես կուզեմ ամեն օր ձեզ հետ պարտիլ, սիրելիս, ստիպուած եմ նորէն անգո փոխել...

Եղաւ, այս ատու նոր սիրուհոյս հասկցուցի. ախ, ձեզ, որտիս պզտիկ աստրական, ինչո՞ւ հոն չէիք, այնքան պիտի խնդայիք, այնքան պիտի խնդայիք որ կարծես Պուլլըն է որ զձեզ թուակէլան կանցնէ ու կը վերանցնէ կոր:

— Արեւօք, հարցոց ինձի սիրուհիս, խոհանոցէն դժգոհ ես:

— Ձե՛, խոհանոցէն գոհ եմ, բայց զուգած ատենս զուրս չի կրնայ կընելու դժգոհ եմ:

Մերական երկու օրը անգամ մը կրնամ կը տեսնել... ախ բաւական չէ:

Պահանջկոտութիւնս չի կարծացոց զինքը, ընդ հակառակը, որքանուր գտնելով գայն:

— Եթէ կուզես ամեն գիշեր զորս ելիք, առաջարկեց ինձի:

— Այդ ալ բուսական չէ, ասարկեցի չոր կերպով, իմ գործն կէս օրէն ետքն է:

Երկու օրէն Լէյսի Զ... ի տունը պիտի մտնամ. հրաման ասի ամեն օր թէյէն ետքը զորս ելիլ և ամիսը 3 օրիկ պիտի առնեմ: Օ՛հ, մարդիկ, հանգիստ ելիք, ձեր երկու շիջու պիտի տամ: Այնպէս վրայ միտակ Գէթին չէ. պիտի տեսնէք:

Ձեր սիրատու

Մերի:

Երրորդ նամակը ֆարք-իմպայ մըն էր, զիբրը ծուռ ու մուռ են ինչպէս ուռնիները անձրեկէն ետքը:

Ինչո՞ւ երկի չեկա՞ք: Թրափալկար հրապարակին վրայ՝ Նկունի արձանին քովի կը երկու ժամ սպասեցի ձեզի: Ոստիկանները ծուռ աչքով նայեցան ինձի և գորահաւար յինսպետար ութը անգամ հետ խոսեցաւ: Ախ, ձեզ, եթէ գիտնայիք թէ առաջուրէ պակաս կը սիրէք զիս, կարող եմ խնայութիւն մը բնելու, կիմանաս: Շատով գրէ ինձի: Նամակագրութիւն ստակը կը վարեմ:

Ձերդ

Մերի:

Չորրորդ նամակը քառեկաւոր թղթի վրայ գրուած էր, թերեւս անոր համար որ թուանշաններու վրայ պիտի խօսուէր անոր մէջ:

24 փետրուար

Ձեր նամակը պատուաւոր երեսասարկի մը գործը չէ:

Դուք բաւ զիտեք թէ հեծելազօրի մը թանհան երկու շիջու է. գուր ինձի բոսած էք ասիկայ:

Հիմայ կըր երեք շիջու կը պահանջէք, հալլալներդ(*) մը գիտեք: Երբո՞ւրէի վեր Սկոտլանդի եղաք:

Արդէն շիտակը կուզէ՞ք ես ալ պարտելներն վազ անցայ:

Միշտ գուր երեք որ պարտել կատարելէք: Բերանիդ բանալուց պէս — Այս օր սիր պիտի երթանք — կը հարցնէք: Երբ ձեզ կատարելի տուէր նստիլ և կամ անտես կէս գուրս չեղել, միշտ երեսնիդ կը թողնէք: Արեւօք երկու շիջու շառնելուց համար կը ասիկայ:

Վերջին անգամը համարը մը իսկ չի սուրբ: Ես անցեալ օր աչքովս տեսայ որ նուրբ պարտածստին առջէն անցած միջոցնուս, ներսը՝ Լիթին կը նայէիք կոր, ձան աչքովնիդ նշան ըրիք իրեն և վարէն վեր ճոճեցուցիք ձեր ձեռքի գաւառնը, ճիշդ ինչպէս որ ինձի ըրիք երբ առաջին անգամ իրարու հանգիպեցանք:

Ձեմ սիրեր որ վրաս խնայան, սիրելի Պարոն, ախ գիտցած ելիք: Ես պատուաւոր կերպով կը վարում: Ինձի պէս ըրէք:

Եւ երբ ինձի հետ պարտուելու համար երկու շիջու կատանք, գոնէ որ ինչի աչք չեն կու չափ պատու ունեցէք:

Քանի որ ինչ ըլլալս չէք գիտեր ես՝ ձեզ պիտի ցուցանեմ:

Անկեղծօրէն ձերդ

Մերի:

Յ. Գ. Երկու շիջու երեք Բէնս... գործերնուց կուգայ:

Հինգերորդ նամակը պաշտօնական թղթի վրայ գրուած ճիշդ տասը սող կը պարունակէ:

26 փետրուար

Պարոն ձեզ:

Ձեր ընթացքը շատ լրեւն է: Եթէ վաղը՝ 27 փետրուար, կէս օրին, նամակներս ետ չի գարձէք, ոտիպուած պիտի ըլլամ փաստարանին դիմել, ետքը անոր հետ գործ կունենայք, չեմ խոսնուիր: Դուք՝ Երբին Վե. հափառութեան ծառայութեան մէջ գտնուելու արձանի չէք:

Մերի Գ...

Հինգ նամակներն ալ անմիջապէս պահարանի մը մէջ գնելով իրենց հեղինակին զրկեցի: Կը յուսամ որ փետրուար 27ին, կէս օրէն առաջ ձեռքը հասած ըլլալու են և կերպով որ այսուհետև այլևս երբէք չպիտի կարգամ քովմիներու ուղղուած նամակները, նոյն իսկ եթէ Պատերազմական նախարարութեան յատուկ թղթի վրայ գրուած ըլլան:

ՍԹԵՃԱՆ ԼՈՁԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Իշխանական պալատի մը համար կը փնտառի հայ օրիորդ մը կամ ասիկին մը որ մանկամարդ իշխանուհիներու ուսուցանէ ֆրանսերէն և Դաշնակ:

Դիմել «Նոր Օրի» խմբագրութեան:

(*) Սկոտլանդի շրջագգեստուոր զիմուր:

ՀԵՈՒԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Պետրոս, 9 Մարտ — Կայսեր վիճակը շատ գոհացող է: Սպանություն անյաշուք փորձեր իւրաքանչիւն պէս ամեն վեհա-հասկանալի կը լինի: Ընդհանրական հեռագիրներ ստացուած են:

Կ. Պոլիս, 10 Մարտ — Սուլթանը Պ. Չեռնովկի շնորհակալութիւն յայտնած է Ռուսոյ Մակեդոնական բռնութիւնը հանդէպ բռնած խաղաղապէս ընթացքին համար: Նոյնպէս Սուլթանը իր գոհ յակութիւնները յայտնած է բոլոր պետութեանց պետներուն, կրկնել իրաց վիճակը անփոփոխ պահել ուղղուն առթիւ:

Կ. Պոլիս, 10 Մարտ — Պաշտօնական շրջանակներուն մէջ կը հաւատան թէ Սուլթանը կրկնապէս թուրքերուն խոստացած է գործարար իրենց ուղած բարեփոխութիւններուն մեծագոյն մասը:

Լոնտոն, 11 Մարտ — Իտալիէի գործակալութիւնը Բելժոնիայէ կիսանայ թէ մեծ յայտ կայ որ Պոլսոյն և Քիւնիէի մէջ այս օր տեղի ունեցած բանակցութիւնը վերջնականապէս բանի մը յանգի:

Լորէնտո-Մարտի, 11 Մարտ — Կը կարծուի թէ Պոլսոյ անձնատուր պիտի ըլլայ նոյն իսկ եթէ Տր վէթ ուզէ պատերազմը շարունակել: Բելժոնիայէ մինչև Տրապիսո-Պէյ Պոլսոյն հետքը անգամ չի սեւանուիր:

Սուրաբիկ, 11 Մարտ — Մեծ խանութիւններուն կը տիրէ Պուլկարական սահմանադրութիւնը վրայ դրուած թուրք զինուորներուն մէջ:

Ս. Բեդրիարուի, 11 Մարտ — Հակառակ միւս պետութեանց բողոքներուն՝ Մանչեսթրի մասին կնքուած Ռուս-Չինական պայմանագրութիւնը կատարուած իրազօրութիւն մը կրնայ նկատուիլ:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Կէս-պաշտօնական շրջանակներուն մէջ կըրտի թէ Ն. Բ. Խիլիքը յառաջիկայ ձմեռ մեծ ճամբորդութիւն մը պիտի ընէ զէպի Սուտան:

Պոլսոյ Արքայութեան Նախարարութեան բարձրատիճան պաշտօնեաներէն Նուրի պէյ ընդհանուր քարտուղար անուանուած է, թրքական արտասովոր պատուիրակ Ղապի Մուխթար փաշայի մօտ, փոխանակ Մահմադ Կէյի որուն յանձնարք եղած է Տամաս Մահմադ փաշայի վերադարձը չի յանձնարել:

Ն. Բ. Խիլիքը 1,000 Քրանքի նըուէր մը բարեհաճած է զրկել Քրանչիսկեան քոյրերու սրահոցին:

Ափրիկեան Տրապիսոյ նախկին կառավարիչ Իսմայիլ պէյ Քէմալ որուն փախուստը այնքան ազնուի հանեց, երէկ Աւստրիական շաքենաուղ Ազեքանդրիա հասած է:

Ազեքանդրիոյ թերթերը կիսանյուն թէ Քօլոն Բուրբէի կողմերը կատարուած պիզուներու միջոցին, փառասիր Սփինըր մը գտնուած է որ հըրաշակերտ մըն է իրեն գեղարուեստական աւարկայ:

Տաիրա Սանիէի նախկին անօրէն, Ուսէյա Փարիտ փաշա, միւսաւ երէկ 67 տարեկան հասակին մէջ:

Անգլիոյ Խորհրդարանին անգամ Սըր Ճօն Էրտ 5,000 սօկի նուիրած

է վերթօփա թափու հիւն մահուան տարիս: Եզրագոյն անդրազանց գաղտնի կողմէ կուտուցանելիք հիւանդանոց մը շինութեան համար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Բէքինի զինուորական շրջանակներուն մէջ թէև կըրտի թէ զաշխակից պետութիւնները որոշած են իրենց պրօքթըրը ետ կանչել, սակայն մինչև հիմայ այդ մասին վերջնական որոշում մը չէ տրուած որ և է պետութեան մը կողմէ:

Յրահասցիները՝ առաւել բան երբէք մեծ պատրաստութիւն ընելու վրայ են: Իրենց Բէքինի գեապանատան պահպանման համար մէկ գունդ հետեակ զինուոր և մէկ գունդ հեծելազօր թողած են հին:

Ուրիշ զինուորազոր յատկացուած են Թինի-Տու-Բէքինի երկաթուղին պաշտպանելու համար:

Եւ այս ամենը մեծ զգոհութիւն կը պատճառէ Անգլիացոց սը հեշտ աչքով չեն նայիր այս պատրաստութիւններուն վարկաբանութիւնը որ Երանի Չէ փոխարքային տհաճոյ երեան այս միջոցները:

ԻՏԱԼԱՏԻՔ ՅԱՐՈՒԿԷ

Անգլիական կառավարութիւնը զինուորահաւար պաշտօնեաներ զրկած է իտալիա սը կըրգած են 300 երիտասարդ իտալացիներ ժողովը որոնք արդէն ճամբայ կըրած են Անգլիական բանակին մէջ Պօէրներու դէմ պատերազմելու համար:

ՊՕԷՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Տուսէլտօրֆի (Քերմանիա) մէջ 4000 հոգիէ բաղկացած միթինի մը տեղի ունեցած է սրուն մէջ որոշուած է ուղերձ մը զրկել կոմս Պուլովի, արտաքին գործոց նախարարին սրտմտութիւն մը յայտնած են ընդ դէմ Անգլիոյ որուն վայրագ կերպով Պօէրներու դէմ պատերազմելը անարդար կը գտնեն և այս առթիւ կը յուսան որ Եւրոպական պետութիւնները վերջապէս պիտի միջամտեն վերջ մը տալու համար այս ստակտի պատերազմին:

ՍՈՒԼՔԱՆԸ . . . ԿԱՆԱԳՈՐԾ

Թերես ամեն մարդ չի գիտէր թէ Սուլթանը իր երիտասարդութեան մէջ հիւանդութեան շատ սէր տուած է և մինչև հիմայ Երէրզըր մէջ կահագործութեան յատուկ գործարան մը ունի ուր շատ անգամ ինքը անձամբ կաշխատի:

Վերջերս Բեքրապուրիի թրքական զեապանը պեղակերտ գրասեղան մը ներկայացուցած է Նիքօլա Չարին: Այդ ընծուն Սուլթանին ձեռքով շինուած գործ մըն է որ ճաշակի, արուեստի և շքեղութեան տեսակետով պարզապէս կահագործական հրաշալիք մըն է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՑՈՒԹԻՒՆ Ի ԹԻՐԱՆՍԿԱՎԱՍ

Որքան որ երկուսն օգտի ի վեր Ռիւթերի և Համլաի հեռագրական կրթիկն գործակալութիւնները ծանուցին թէ Պոլսոյ անձնատուր եղած է երէկ, սակայն որեւէ պաշտօնական լուր մը այս պրոքթըր չի հաստատեր:

Իրաւ է որ ոչ կամ կանուխ գործերը հոգ պիտի յանգին բայց ասկէ քանի մը օր առաջ Քրուկէր Նախագահը կը յայտարարէր թէ Պոլսոյ անձնատուր բոլոր պատերազմը վերջացած ըլլալը չի նշանակէր, քանի որ քաղաքական տեսակետով Պոլսոյ զօրավարը Պօէրներու ներկայացուցիչը չի համարուիր և թէ Պօէրներու կառավարութիւնը իր ամբողջ զօրութիւնը կը ստանէ սակաւին:

Պոլսոյ անձնատուր բոլոր կամ ոչ, Լօրա Քիւնիէր սակաւին շատ բան ունի ընելիք: Անդին Տրէթներ, Սթէյններ, Տրէրներ, Հէրձօններ և ասոնց պէս գեաւ ուրիշներ կան որոնք Պոլսոյ պէս չեն մտածեր և մինչև այս օր վհատութեան որեւէ նշան մը չեն տրուած:

Ընդհակառակը Լօրա Քիւնիէրը ստացուած պաշտօնական հեռագիր մը կը ծանուցանէ թէ Տրէթ Օրանժի ազատ Պետ թիւան մէջ մտած է ինչ որ անգլիական բանակին համար ձախտուած մը ըսել է:

Ինչ որ ալ ըլլայ Լօրա Քիւնիէրը գրծուար կացութեան մը մէջ կը գտնուի Ուրան որ անգլիացի հրամանատարը ուղէ շարունակել Թրանսփալի արեւելեան և հիւսիսային սահմաններուն վրայ սկսած յառաջխաղացութիւն, սակայն առ այժմ իր ծրագրէն ետ կենարան ստիպուած է քանի որ իր զինուորները յոգնած և քիչ մըն ալ վհատուած են այս վերջին ձախտուածներուն բերմամբ:

Թերես նոր գլխեր զրկուին նաև Թրանսփալի արեւմտեան կողմը սը Լօրա Մէթուէն բան մը չի կրցաւ ընել: Տրէրի պօէրը զօրավարը գօտեպինգ կերպով թշնամոյն զաւտեան կուպուէ հին:

Իրաց այս վիճակը ինքին կը ցուցանէ թէ Հարաւային Ափրիկէի մէջ գործերը իմաստը կարգադրուելու հանգամանք մը չունին, հակառակ այն լուտուես լուրերուն որ անգլիական մամուլին մէջ երեցուն երկու շարաթէ ի վեր:

Պօլսոյ փաշա Նուպարի պարահանդէսը՝ որուն պատրաստութիւնները մեծ փութկոտութեամբ առաջ կը տարուին և որուն համար կըրտի թէ սարուսոյ ամենէն փառասիր աշխարհիկ հանդէսը պիտի ըլլայ, տեղի պիտի ունենայ, ինչպէս կը յիշուի, վաղը գիշեր:

Վեց հարիւր է տեղի հրաւիրագրերը զրկուած են թէ հոս և թէ Ազեքանդրիա:

Ա Ղ Գ Ա Յ Ի Ն

Հաճոյքով կիմանանք թէ Տրէթըր Մախթարեան բոլորովին ապրքինած ըլլալով այն հիւանդութեան որ այնքան մտահոգութիւն պատճառեց իր բարեկամներուն և ամեն անոնց որ իր խնամքներուն պէտք ունին, սկըսած է անցեալ երկուշաբթի օրուրէն ընդունիլ ըստ առաջնոյն իր հիւանդները սովորական ժամերուն:

Ազեքանդրիոյ մէջ ի նպատակ Ազգատոհմում ընկերութեան անցեալ երկուշաբթի գիշեր արուած թատերական ներկայացումը ահաղին յաջողութիւն մը գտած ըլլալը նոյն քաղաքէն կը հազորդեն մեզի:

Մանրամասնութիւնները շարաթ օր:

Ակնայ Որբախնամ ընկերութեան կողմէն հետեւեային հրատարակութիւնը խնդրուած է խմբագրութեանէն: Գահիրէ 6 Մարտ 1901

Խմբագիր. Պատիւ ունիմք ծանուցանելու թէ քաղաքի Ակնայ Որբախնամ ընկերութեան ստրեկան Ընդհ. Ժողովոյ նիստը տեղի ունեցած է 1901 Քեմր. Յին, և նոյն օրուն նստին մէջ ըստ ընկ. կանոնագրին կազմուած է Ընդհ. Ժողովոյ Դիւանն ու Գործակից Ժողովը:

Գործակից Ժողովը իր Դիւանը կազմած է հետեւեալ կերպով:

- Տիար Խաչիկ Պերպրեան Ատենա դիտ
» Օննիկ Նորիկեան Ատենադպիր
» Սարգիս Ղազարեան Գանձապահ
» Ալիբեան Պոյաճեան Հաշուակալ
» Սարգիս Թաթարեան Խորհրդական
» Մինաս Մարգարեան
» Կարապետ Խանարեան

Դիւանն ծանուցանելով զայս կը խնդրէ որ բարեհաճէր Պատ. Ներ-Օրոյ միջոցաւ յատարարել յօդուս ընկերութեան և իր փոփանս օրերու:

Ընդունեցէր Տէր, մեր կանխանակը շընորհակալեք ու յարգանաց անկեղծ հաւատով:

Ի զիմաց Ակնայ Որբախնամ ընկերութեան Ընդհ. Ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ
Յ. ՄԱՐԶՊԱՆԵԱՆ Ա. Մ. ՊԵՐՊՐԵԱՆ

ՃԱՆՍԱՊԱՐՀՈՐԳՈՒԹԻՒՆ ՍԵԼԻՏՈՊՈԼԵ ԵՐՈՒՍԱԼՆՍ 25 ՕՐ ՊԱՂԵՍԻՆՈՒ ՄԷԶ

(Շաբ. 71 Թիւէն)

Այս խօսքերը վերջը տեղի ունեցող համարեցի ոչ ևս միայն և սեղանի գոյցի երկաթուղի կայարանը զկար Սիմֆերոպոլ ձախտարհուելու համար:

Հետեւեալ օրը՝ Օգոստոսի 21ին՝ առաւօտեան ժամը 4ին՝ նահանգական Սիմֆերոպոլ քաղաքը հասաւ: Որպէս զի գործին տեղի յաջող ընթացք տալ կարողանաւ՝ նախ գոյցի Արեւմտապատիւ Տեր Օգոստոս Աւագ քահանայի մօտ և խնդրեցի սորակզալ ինչ հետ միասին՝ տաճկական ներկայացուցչին զիս ծանօթացնելու և անցազրիս մասին միջնորդելու համար:

Արեւ, Տեր Օգոստոս Աւագ քահանան սիրով կատարեց խնդրոս:

Այս և հասանք տաճկական ներկայացուցչի պիւստուտունը, — սասց Տեր Օգոստոսին, մասնը ներս: Արեւ, Տեր Օգոստոս:

ախտաբ գրագրին ուղարկեց տանկական ներկայացուցչին մտն՝ գալու մասին խնայեցու համար:

Գիշ ժամանակէ յետոյ՝ մեջ գիմնարեց մի յայնմանցաւ մարչ՝ կարմիր ֆլոր գլխին:

Ար. Տէր Օգոստինոսը զիս ծանօթացնէ լէ յետոյ՝ առայ տանկական ներկայացուցչին:

— Այս իմ եղբայր բռնահասն՝ իբրև ախտաբ Երուսաղեմ գնացու է, եկած է քաղաքն՝ որ զայր նորանցազրի մէջ ստարազրէ և ձեր կնքով գրուցի: Ես իմ կողմէ ևս խնայեմ, արար կ'ընդրեմ ձեզնէ կատարել նորս խնայեմ:

— Կը ցախով՝ որ չեմ կարել, որովհետև խիստ հրաման կայ չեմուտ տանկատան անցնել ո՛չ Հայերը, ո՛չ իտալացիները և ո՛չ ալ Հրեաները: Ես եթէ ստորագրեմ, պաշտօնս կը քրկս իմ:

— Բայց ինչ հիման վրայ զիս չը թողնէր Երուսաղեմ՝ ախար գնալ: Միանգամ որ Ռուսաց Տէրութենը ինչ անցազրի է տակ Երուսաղեմ գնալու, զայր իրաւունք չունիք շնորհելու: Ես մանաւանդ ձեր վարմունքը՝ բացի անպատեմեմէ՝ որիչ բան չի բերեր Ռուսաց Տէրութեան: Այնպէս չէ՞ Պ. ներկայացուցիչ, — հարցրի:

— Կը խնայեմ մի կերպ վերջացուցը այս գործը, առայ Տէր Օգոստինոսը դատաւրով առ իսկան ներկայացուցչին:

— Անհարկն է.
— Ինչո՞ւ մի խեղճ բանալի ինչ կրկից կարելի չ'ունենալ:

— Մենք, սանկիներս, պարզ ասեմ, ախի Հայ հոգնարականներ վախ սնինք, քան թէ աշխարհականներ — առայ տանկ պաշտօնեան:

Որքան ներքեցը կ'իկուի, որ մենք ձեզ բա ախանին գիտաւանքը պատճառեցինք անցազրի ախիթով, առայ Տէր Օգոստինոսը և անիթազիս՝ ձեռք առալով միմեանց՝ զիւստանառնին հեռացանք և Տէր Օգոստինոսի առնը վերադարձանք:

Ար. Տէր Օգոստինոս Աւագ քահանան՝ տեսնելով որ մեր բրած այցելութիւնը տանկայ ներկայացուցչին ի գոր կ'գաւ՝ մի տեսակ մտաւանդութեան մէջ ընկաւ և կր խորհրդէ ինչ օգտակար լինելու նպատակով կարծեմ՝ մի հարբի վրայ:

— Ինչո՞ւ, Տէր Հայր, իտրատուեցաք մտանաւանդների մէջ, հարցրի:

— Պէտք է ձեր գործի համար մի կըր գտնել, և արդէն գտնելու վրայ եմ իմ Սարկուսար, շարունակեց Տէր Օգոստինոսը, շատ մտերի է տանկաց ներկայացուցչին հետ: Երան միջնորդ ձգեմ, տեսնեք ինչ կը լինի:

Տէր Հայրը գտնակը հնչեցրեց, որով յետոյ շատով ստան ազանիւնը ներկայացուց:

— Գնա Սարկուսարի տանը և իմ կողմէ հրաւիրել նորան այս տեղ:

— Այս րո զէի, պատասխանեց ազանիւնը և գ'աց:

Որովհետև Սարկուսար կր բնակէր Տէր Օգոստինոսի կողքաբնականի տան մօտ, մի և նոյն գաւթի մէջ, ուստի հրաւիրուածը շատով կրեւայ:

— Սարկուսար, կրնաք տանկաց ներկայացուցիչը, ձեր մտերիութիւնը, համոզել, որ սա համաձայնի Տէր Արա զ'անի անցազրի իր ստորագրութեանը և պատական կնքով վաւերացնել, որպէս զի սա առանց արդիւրի կարող լինի ճանաչարդել զ'պի Երուսաղեմ: Եթէ բե՛ց ալ չի լսէ, այն ժամանակ խոստացիր նորան 40ր րուպի կաշառք: Տեսնեք ինչ կը լինի:

— Շատ բաւ, կերթամ, ու տանն ճիգը

Թափեմ, որ օգտակար կարգանամ լինել, պատասխանեց Սարկուսար, և գնաց:

(Շարունակելի)

ՍՐԱՊՈՒՄՆ ՔՀՆՑ. ՍԱՄՈՒԷԼԻԱՆ
27 Փետր. 1901
Գահիրէ

ԿՈՒՋԷՔ ԲԱՂՆԵՐՆԻՂ ՓՈՐՁԵԼ

Գնեցէք ժողովրդական Տարեցոյցէն հետ մը, որ շատ մը կատարեցի և օգտակար հաստատեցի: Ենա կըր գտնուի նաև զեղեցիկ բողոքացոյց մը պէտք եղած բացատրութեամբ:

Սոյն Տարեցոյցէն և Պարզ Օրացոյց զ'նէլ փախարդը ինչ հաճին գիմնէ սա Տ. Օգոստինոսեան, որ պատրաստ է որիչ ամէն տեսակ գրքերու մասին յանձնարարութիւնը փախարդ կատարել փորթիկ կանխավճարով մը: Երջակայ քաղաքներէն Տարեցոյցի և Օրացոյցի մասին եղած յանձնարարութեան համար գրամի տեղ թրջութեամբ կըրնոյ ունուի:

Տարեցոյցի գինը 10 Դր. ողջ
Պարզ օրացոյցիը 2 "

Ա. Չ. Դ

Շատերու կողմէ յայտնուած փախարի մը գոհացում ապրու և մեր ընթերցողներու գիտութիւն մը ընծայելու նպատակով, այսուհետև մեր լեկտիւր հոտով պիտի ծախարի Շարա Ապոստոլ-Ապոստոլի սկիզբը Պ. ԿՈՐՈՒՄՆԻՑ ԵՐՁՆԻԱՑԵԱՆԻ խոստովը ինչպէս նաև Գրքի-Պէ՛յ փողոցի ծայրը և իմբրամէ՛յի երու կայարանին մօտ ծխափաճառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳՈՍՏՈՒՄԵՆԻ քով:

Le Gérant J. MUNIER

Տպար. Միսրիան. — Թ. Ա. Փախարիսին

ՊԱՆԳ ԼԻՍՆԷՋ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՎԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ Մ. ՍՏՍՈՅԵԱՆ

Լիսնի հանրածանօթ գրամատներ, այս անգամ անեցաւ իր Եգիպտոսի գործակալնալ, Տ. Մ'կրաիչ Սոսոյեան, որ իր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վառահալթիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, ԱՂ Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիսնի բազարապետութեան պաշտօնագրէս վաւերացուած փախարդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիսնիցի միջոցաւ ամէն տեսակ գրամատներ և Քաւարի Ֆոնտիլի, վիլ ալ Քարիի և Պապրիտի ամէն արժեթուրներու գործողութիւններ, գանձումներ, Սեպտական ճիւղի գումարի մը խնայարարութեամբ ձեռք կը բերուի քիչ տանէն, պահետի բաժնեկիցի մը, գիճակահանութեամբ կրոյխուարուած:

Փախարդները հաճին գիմնէ Եգիպտոսի վրայ փաստարան Ռարիթագրի գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ գրամ գրելի կը հետեւալ հասցէին:

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ
Ի ԳՈՒՀԻՐԷ

ԱՏԱՆԱՐՈՅԹ

Պ. ՆԻԿՈՂԻՄՍՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գահիէ ալ լա Պարթի կից, Բ. յարկ, թիւ 9 գտնիկանը:

Կը բժկէ բերնի և սկաւայի ամէն տեսակ հիւանդութիւնները: Աղքատները ձրի կը գարանէ ամէն օր, առատահան ժամը 8էն 9:

ՊԵՍԵՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ. ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՔԱՆԵՐ ԱՐԱՆ ԵՒ ՏԻՆԱՆՑ ԵՒ ՉԵՆՈՒԹԵՆԻՆ ԳՐՈՑ

Ապիկնի մեծ պոլիտեխնիկ վրայ ճայիրայի Ապիկնի գիմնար, Եգիպտոսի Եգիպտոսի գործիքնու վաճառ սառնը:

Վերջերս Ամերիկացի հաս եկած հաստատուած բլլալով կը յայտարարենք այդոյ հասարակութեան լեպատարանը եւր գոհացնել մեզ գիմնար Պատ. յանձնարարները, գործի մարթութեան, գինեբու շախարաթեան և ճշգրտահալթեան կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'աւանդուին նաև ձեռագրութեան գասեր ամերիկեան ամենալեղիկ կատարելագործուած մէթոտով:

Մանրամասնութեանց համար գիմնէ մեր գործատեղին:

ՃԱՆԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵԴՔ. ԳՈՋԱՆՃԵԱՆ

Շարա Ապոստոլի

Կրկն. Տիգրեանի կեդրոնին գիմնար.

Օգտուն ու պարտաւրի գիրք մար ու փայելուց սպաս համեզ ու անեցարար կերակուրներու պանագրանութիւնն, անխարայա պատրաստութիւնն ճիւր ճաշացոյցակ մը գիւրաժառանգի գինեբով, ահա՛ Գաղանձեան կարաց ճաշարանը:

Ով որ կ'ողէ, փորձի համար մեկ անգամ թող գիմնէ, փաստս պէտք է բլլայ թէ մշտակայ յանարարը պիտի գտնուայ հայկական ճաշարանին:

Տ Պ Ա Ր Ա Ն

Ի ԳՈՒՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳՍԹՅԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

Սոյն նորակալով տարածնին մէջ կը տպուին հայերէն ու երուպական լեզուաւ ամէն տեսակ հրատարակութեան, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, չըթերթականներ, այցեւումներ, մահազգեր, հարստանաց հրաւիրագրեր, կանոնագրութեան, նամակազրկներ, պահարաններ, հաշուեցոյցակներ ևլն:

Յանձնարարութիւններ կը կատարուին փոքրով, ամենայն խնամով և ճաշկատող սպազորութեամբ:

ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ